

ԿԱՐԾԻՔ

Հրածին Վարդանի Վարդանյանի «Սփյուռքը ժամանակակից պատմագիտական-տեսական դիսկուրսում (20-րդ դ. վերջ -21-րդ դ. սկիզբ)» Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

1. Ատենախոսության թեմայի արդիականությունը:

Արդի տեխնոլոգիական զարգացման ժամանակաշրջանում ավելի հասանելի են դարձել մարդկանց վերաբնակեցումները, արտագաղթը, ներգաղթը, հետգաղթը և այլ տեղաշարժերը՝ պայմանավորված տնտեսական, քաղաքական, կրոնական, հասարակական և այլ գործընթացներով: Այս հոսքերը առաջ են բերում մի շարք խնդիրներ, որոնք վերաբերվում են տեղաշարժվող անհատների, խմբերի «կարգավիճակի» բնութագրման և տիպաբանման հարցերին: Եվ այս առումով է, որ գիտական շրջանառության մեջ են դրվել «սփյուռք» եզրի սահմանման, դրա բովանդակության, տիպաբանության քննություն հարցերը: Մույն աշխատանքի առանցքը հիշյալ հարցադրումների համապարփակ ուսումնասիրությունն է, որով և ընդգծվում է աշխատանքի խիստ արդիական լինելը: Աշխատանքում սփյուռքագիտության վերաբերյալ ուսումնասիրության հիմնական մոտեցումը համաշխարհային քաղաքական ներկա կացությունից բխող ազդեցություններն են, քանի որ հեղինակը մատնանշում է, որ սփյուռքի նկատմամբ գիտական հետաքրքրության աճի հիմնական պատճառները քաղաքական են:

Հեղինակի ուսումնասիրման օբյեկտը 1980-ական թվականներից գիտական շրջանառության մեջ դրված սփյուռքի տեսություններն են: Հեղինակը հատուկ ուշադրության է արժանացրել ինչպես արևմուտքում սփյուռքի ականավոր հետազոտողների տեսություններն, այնպես էլ անդրադարձել է սփյուռքի տեսաբան, հայկական սփյուռքի հետազոտող, ԱՄՆ Վեսալյան համալսարանի պրոֆեսոր Խաչիկ Թյոլոյանի ներդրմանը սփյուռքագիտության ոլորտում: Նա մատնանշում է, «Սփյուռք» և «Ցրոնք» հասկացությունների վերաբերյալ սահմանումների և ձևակերպումների ուսումնասիրության կարևորությունը՝ ցույց տալով սփյուռքի ժամանակակից ուսումնասիրությունների հարցում դրանց ուրույն տեղը:

2. Ատենախոսության կառուցվածքը:

Ներածական մասում հեղինակը ներկայացրել է թեմայի արդիականությունը. 20-րդ դարավերջում և 21-րդ դարասկզբում սփյուռքները ենթարկվում են փոխակերպումների, որից բխում է «սփյուռք» երևույթի նկատմամբ հետաքրքրության կտրուկ աճը՝ որպես միջգիտակարգային ուղղություն՝ քաղաքագիտության, պատմագիտության, սոցիոլոգիայի, մարդաբանության և այլ գիտաճյուղերի համատեքստում: «Սփյուռք» և «Ցրոնք» եզրույթների իմաստային տարրնկալումների և

դրանց կիրարկման հիմնական ուղղությունների, ընդլայնման և նեղացման, վերախմաստավորման վերաբերյալ:

Մանրամասն ներկայացվել են ուսումնասիրության հետազոտական խնդիրները, նպատակը, թեմայի ուսումնասիրվածության աստիճանը, օբյեկտը, առարկան, մեթոդները, տեսական և գործնական նշանակությունը, հրապարակումները, կառուցվածքն ու ծավալը, գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող դրույթները: Հեղինակը հետազոտության համար կիրառել է համեմատական-վերլուծական մեթոդը:

Ատենախոսությունն ընթերցելիս պատկերացում ես կազմում այն ծավալուն աշխատանքի մասին, որը հեղինակը կատարել է: «Սփյուռքի տեսաբանումը և «սփյուռք» հասկացության իմաստաբանական, հայեցակարգային փոփոխությունները» գլուխը նվիրված է սփյուռքի հիմնական տեսություններին և «սփյուռքի» սահմանման խնդրին տեսության մեջ. թե նախորդ դարի 60-ական թվականներից ինչ զարգացման փուլեր է անցել: Այս գլխում անդրադարձ է կատարել սփյուռքագիտության՝ որպես առաձին գիտակարգի ձևավորման պատմությանը, տեսաբանական քննարկումներին, որտեղ հեղինակը վերլուծել է առկա հայեցակետերը, բացահայտել դրանց առանձնահատկությունները, որոնք զգալի դերակատարում ունեցան միջազգային հարաբերություններում և սա էր պատճառը, որ սկսեցին հատուկ քննության առարկա դառնալ սփյուռքին առնչվող եղելությունները: Հեղինակը մեկտեղել է արևմտյան և արևելյան, ինչպես նաև հայրենական մոտեցումների ակնառու փոփոխությունները և ընդգծել դրանց զարգացման գործոնների տարբերությունները: Այս հանգամանքը վկայում է աշխատանքի տեսական անհրաժեշտ բազայի մասին: Գլխում սփյուռքի վերաբերյալ գիտական ուսումնասիրությունները ձևակերպված են ըստ ուղղությունների, փուլերի, հատկանիշների, տիպաբանության և այլն: Սփյուռքի հիմնական տեսությունները շարադրելիս հեղինակը հաշվի է առել ինչպես դասական, հայրենակենտրոն, կոնստրուկտիվիստական, հետարդիական, միջազգային մատեցումները, այնպես էլ հետխորհրդին սփյուռքագիտության մեջ Ա. Բեժանյանի հայեցակետը: Հեղինակը մատնանշում է, թե ինչ նրբերանգներով և որտեղ են նույնանում և տարանջատվում առկա մոտեցումները: Հեղինակը մի ենթագլուխ նվիրել է սփյուռքի տեսաբան Խաչիկ Թյոլոյանի՝ սփյուռքի վերաբերյալ մոտեցումներին և առանձնահատկություններին, համարելով, որ նրա մոտեցումները առանձնանում են իրենց ընդգրկունությամբ և ճկունությամբ: ««Սփյուռքը» և նրան առնչվող եզրույթները հայկական սփյուռքի պատմության խորապատկերում» ենթագլխում նկատվում է հեղինակի առանձնակի մոտեցումը դասական սփյուռքներից մեկի՝ հայկականի նկատմամբ, որը արդի է հայության քաղաքակրթական հարցերի տեսանկյունից: Պետք է ընդգծել, որ այս ենթագլխի վերագիրը չի բովանդակում նկարագրված նյութն ամբողջապես:

«Սփյուռքի հիմնական առանձնահատկությունները և տիպաբանությունը» գլխում ատենախոսը ներկայացրել է սփյուռքի հիմնական հատկանիշները և ինքնության առանձնահատկությունները: Հենվելով հին ու նոր սփյուռքների

զարգացման, արդի պատկերի և հիմնական միտումների վրա՝ հեղինակը համարում է, որ սփյուռքի հիմնական հատկանիշների վերհանման համար առանցքային են այդ ելակետերը: Ինչպես նախորդ գլխում, այստեղ ևս հեղինակը միատեղել է արևմտյան և արևելյան հեղինակների մոտեցումները, դուրս բերելով դրանց շեշտակի առանձնահատկությունները սփյուռքագիտության արդի ուսումնասիրման համար: Այստեղ մեկտեղված են նաև սփյուռքյան ինքնության առանձնահատկությունները: Հատկանշական է նաև սփյուռքագիտության մեջ սերունդների դերը և դրանով պայմանավորված փոխակերպումները: Ինքնության հարցերի մասին խոսելիս ատենախոսը մատնացույց է անում հայկական սփյուռքի օրինակը՝ հիմքում ունենալով Վ. Սահակյանի մոտեցումներն ու ընդգծումները: Սփյուռքյան ինքնության համատեքստում քննարկվել է շարժունակության և նստակեցության փոխհարաբերությունները. այս մոտեցումը կարելի է համարել լայն և ընդգրկուն ինքնության ընդգծման տեսանկյունից:

Սփյուռքի տիպաբանության և դասակարգման մոդելների խնդրի շուրջ ատենախոսը փորձ է արել բացել խճանկարը համեմատական մեթոդի կիրառմամբ, պարզաբանելով սփյուռքների ծագման, ձևավորման պատմությունները, ընդունող երկրում հիմնական զբաղմունքները, հայրենիքի հետ հարաբերությունները: Ջետեղել է Ջ. Արմսթրոնգի, Կ. Բաթլերի, Ռ. Քոհենի և Մ. Էսմանի դասակարգման մոդելները: Առանձնակի մոտեցում է ցուցաբերել Գ. Շեֆֆերի դասակարգման մոդելին, ում աշխատանքները համեմատական ուսումնասիրության տեսանկյունից ունեն գիտական կարևոր նշանակություն: Համապարփակ կերպով լուսաբանվել և ուսումնասիրվել են հայկական սփյուռքի տիպաբանական առանձնահատկությունները՝ ընդգծելով առևտրային, ձեռնարկատիրական, գոհ դասակարգման մոդելները:

«Սփյուռքը որպես քաղաքական գործոն. հայկական սփյուռքի քաղաքական դերակատարության խնդիրները արդի փուլում» գլուխը աշխատանքի առանցքային հատվածն է: Այստեղ ընդգծված են սփյուռքի քաղաքական դերակատարության հիմնական ուղղությունները, որը շատ արդիական է ներկայիս հայ իրականությունում: Կարևոր ենք համարում հեղինակի այն միտքը, որով մատնանշվում է, որ սփյուռքների քաղաքական դերակատարության աճը չի ենթադրում, որ սփյուռքը և սփյուռքաբնակները լիապես ազատ են ծրագրել և գործել բացառապես՝ ըստ իրենց կամ իրենց հայրենիքի հետաքրքրությունների և շահերի: Սա խոսում է քաղաքական կացությունների խիստ հարաբերականության մասին՝ ներքին և միջազգային քաղաքականության խաչմերուկում: Գլխում հատուկ ուշադրության են արժանանում պետականազուրկ սփյուռքների օրինակները, որոնք այս դիսկուրսում ունեն հստակ տարանջատվող առանձնահատկություններ: Համապարփակ մոտեցում է տրված նաև սփյուռքի նկատմամբ հայրենի (ծագման) երկրների պետական քաղաքականության տիպաբանությանը: Այստեղ մատնանշվել է որոշակի օրինաչափությունների ընդգծումը և տիպաբանումը: Սա կարևոր է դառնում նաև հայկական սփյուռքի նկատմամբ ՀՀ՝ զարգացման անցումային փուլում

գտնվող քաղաքականության ճանաչողության և գնահատման տեսանկյունից՝ հաշվի առնելով սփյուռքների դերակատարման աճը սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային և այլ բնագավառներում: Աշխատանքում հատուկ ուշադրություն է դարձվել կորգող, ընդգրկող, կառուցող տիպերին, որոնք բնութագրում են հայրենիք-սփյուռք հարաբերությունների նյութականացումը՝ ըստ մի շարք տեսաբանների, վերլուծությունների հիմքում ունենալով տարբեր սփյուռքների օրինակները: ՀՀ օրինակով հետազոտվել է կարողությունների զարգացման քաղաքականության գործիքակազմը:

Վերջին ենթագլուխը՝ նվիրված է «Սփյուռք-ընդունող երկիր հարաբերությունների քաղաքական համատեքստին»: Հեղինակը համարում է, որ սփյուռքի քաղաքական ակտիվությունը մեծապես կախված է ընդունող երկրների հասարակական, քաղաքական պայմաններից, ուստի այս համատեքստում ատենախոսը ընդգծել է ընդունող հասարակության՝ սփյուռքի նկատմամբ վերաբերմունքի դերը: Այստեղ ևս հեղինակը համապարփակ վերլուծության համար առաջ է քաշել արևմտյան, արևելյան և հայրենական առկա մոտեցումները: «Հայկական սփյուռքի քաղաքական դերակատարության խնդիրն արդի փուլում» ենթագլխում հեղինակն առանձնակի ընդգծում է հետխորհրդային փուլից սկսած ինստիտուցիոնալ տրանսֆորմացիաները: Պետության հայեցարարգային, ռազմավարական, իրավական փոխհարաբերությունների տեսանկյունից՝ հեղինակը շեշտում է, որ փոխգործակցության հին մոդելները չեն ապահովում առավելագույն արդյունք:

Հեղինակի աշխատանքը արժեքավոր են դարձնում նրա կողմից օգտագործված գրականությունը՝ արխիվային փաստաթղթեր, իրավական ակտեր, մենագրություններ, հոդվածներ:

2. Վարդանյանի ատենախոսության թեման առնչվում է հիշատակված հիմնահարցերին՝ նպաստելով խնդրո առարկայի համապարփակ մոտեցմանը սփյուռքագիտության ոլորտում: Հետազոտողի ուսումնասիրման կիզակետում հայտնված տեսությունների ուսումնասիրությունը կարևոր է այն առումով, որ առաջին անգամ են տիպաբանական մոտեցումները զետեղվում մեկ աշխատության մեջ, և այս առումով ընդգծվում է ատենախոսության հիմնական գիտական նորույթը:

Պետք է ընդգծել ևս մեկ կարևոր ձեռքբերում. հեղինակի կողմից սփյուռքին վերաբերող արդի արևմտյան մի շարք հեղինակների հրատարակած աշխատությունների կիրառումը և դրանցում տեղ գտած նոր մոտեցումների շրջանակներում վերլուծական նյութի քննարկումը, տեսական մեթոդաբանական տեսանկյունից դարձել են ատենախոսական աշխատանքի հարուստ հենքը:

3. Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ:

Բարձր գնահատելով ատենախոսի աշխատանքը ներկայացված թեմայի վերաբերյալ՝ կան մի քանի նկատառումներ և առաջարկություններ.

- Առաջին գլխի վերջին ենթագլուխը նվիրված է սփյուռքի մեծ տեսաբան Խաչիկ Թյուրյանի՝ մոտեցումներին, ընթացիկ գործունեությանը և այլն:

Կարծում ենք, որ ենթագլխում հանդիպում են առանձնակի հատվածներ, որոնք ինֆորմատիվ առումով ծանրացնում են աշխատանքը չունենալով հստակ նպատակաուղղվածություն (էջ 50, 51, 52, 53):

- Հաշվի առնելով ատենախոսության հետազոտական հիմնական մեթոդը, պետք է ընդգծել, որ աշխատանքում շարադրված համապարփակ մոտեցումների վելուծական մասը կրում է մասնակի մակերեսային բնույթ:

Ներկայացված նկատառումները, սակայն, որևէ կերպ չեն նսեմացնում ատենախոսական աշխատանքի գիտական արժեքը, և դրանք առաջարկություններ են հեղինակի հետագա հետազոտական աշխատանքների զարգացման համար:

Ատենախոսի հրատարակած աշխատություններում արտացոլվում են ատենախոսության էական դրույթները: Սեղմագրում արտացոլված են աշխատանքի հիմնական բովանդակությունը և հիմնական ձեռքբերումները:

Հրածին Վարդանի Վարդանյանի ատենախոսությունը ավարտուն գիտական աշխատանք է, ունի աժմեական կարևոր տեսական և գործնական նշանակություն: Աշխատանքում տեղ գտած եզրահանգումները կարող են նպաստել սփյուռքի հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների կողմից մշակվող նախագծերի և ծրագրերի իրականացմանը:

Հրածին Վարդանի Վարդանյանի «Սփյուռքը ժամանակակից պատմագիտական-տնտեսական դիսկուրսում (20-րդ դ. վերջ-21-րդ դ. սկիզբ)» թեկնածուական ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի աստիճանի շնորհմանը:

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և Ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրությունների բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր Ռուբեն Սուրենի Կարապետյան

Ռ. Կարապետյանի կարծիքը հաստատում եմ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի փոխտնօրեն՝

Ա. Ա. Բորիսյան

08.12.2023

